

Քիւ 25618
Փետրուար 16, 1978

Մեծայարգ
Տիար ճորճ Սթիվօֆ
Ս. Մեսրոպ Եկեղեցւոյ
Ժիական Խորհուրդի Ատենապետ
Ռէյսին.

Յարգելի Տիար Սթիվօֆ,

Ստացած ենք Փետրուար 14, 1978 թուակիր ձեր տեղեկագիրը, որով կը հաղորդէք թէ Յունուար 29ին գումարուած համայնքիդ ժիական ժողովին մէջ կատարուած է ժիական Խորհուրդի երեք անդամոց ընտրութիւնը, եւ ներկայացնելով բուկարկութեան արդիւնքը՝ կը խնդրէք ընտրուած անձերու վաւերացման պաշտօնագիրը:

Այսու գիրով կը վաւերացնենք ժիական Խորհուրդի նորընտիր անդամները, ըստ ստորեւ տրուած ցանկին:

Համեցէք փութով Առաջնորդարան ղրկել ժիական Խորհուրդի նորընտիր Գիւանի անդամոց անունները, հասցէները եւ հեռաձայնի թիւերը, ինչպէս նաեւ ներփակեալ էջը՝ անհրաժեշտ ստորագրութիւններով:

Օրհնելով ժիական Խորհուրդի նոր կազմը, կը մաղթենք ձեզի եւ ձեր պաշտօնակիցներուն յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան սարի մը, ի պայծառութիւն Ս. Եկեղեցւոյդ եւ ի հոգեւոր շինութիւն համայնքիդ մեր սիրեցեալ ժողովուրդին:

Սիրոյ ողջունել

ԹՈՐԳՈՄ ԱՐԷԵԳԻՍԿՈԳՈՍ
Առաջնորդ

Ռապըրթ Ակիւլեան
ճին Հարաբրզեան
ճոզէֆ Սահնեան